ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/17.4/27171-2025 «20» 08 2025թ.

«ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԺՈՐԱ ԱՂԱՍՅԱՆԻՆ
(Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքը, Նորք թ.1, նրբ.58/2)

Հարգելի՝ պարոն Աղասյան,

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կարիքների համար վարչապետի աշխատակազմի և «Վեգաս Մոթորս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2024 թվականի հոկտեմբերի 28-ին կնքվել է №ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-25/5-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ծառայողական ավտոմեքենաների նորոգման ծառայություններ ձեռք բերելու նպատակով:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1, N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Տեսչական մարմինը 2025 օգոստոսի 18-ին թիվ ՔՏՄ/01.03/22290-25 գրությամբ դիմել է վարչապետի աշխատակազմին՝ հայտնելով, որ 2025 թվականի օգոստոսի 8-ին «Վեգաս Մոթորս» ՍՊԸ-ի տնօրեն Ժորա Աղասյանը Տեսչական մարմին է ներկայացրել գրություն, որով տեղեկացրել է, որ ֆինանսական խնդիրներով պայմանավորված՝ չի

կարող կատարել ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Վեգաս Մոթորս» ՍՊԸ-ի 28.10.2024 թ. կնքված №ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-25/5-1 պայմանագիրը:

Տեսչական մարմինը հավելել է, որ Պայմանագիրը 2025 թվականի ընթացքում կատարվել է 357 660 (երեք հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Տեսչական մարմինը խնդրել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը Պայմանագիրը միակողմանի լուծել և Կատարողի նկատմամբ կիրառել գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 2.1.3 կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողը խախտել է ստանձնած պարտավորությունը՝ չիրականացնելով պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը, վարչապետի աշխատակազմը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի հրաժարվում է 2024 թվականի հոկտեմբերի 28-ին «Վեգաս Մոթորս» ՍՊԸ-ի հետ կնքված №ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-25/5-1 պայմանագրից՝ համարելով այն մասնակիորեն լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, ՎԱՔՏ-ԳՀԾՁԲ-25/5 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.14 կետի համաձայն՝

- Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը լիազորված մարմինը հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

- Եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝ Լ. Գասպարյան
Գործերի կառավարչի տեղակալ
Հեռ.010 515 663